# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.71 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի (1,17 դրույք) թափուր հաստիքի համար:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-Դիմում (Ձև1),մեկ լուսանկար 3X4 չափի,

-Կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-Անձը հաստատող փաստաթուղթ,

-Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),

-Ինքնակենսագրություն (Ձև4),

-Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայության դեպքում),

-Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. մայիսի 08-ից մինչև հունիսի 06-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2025թ. հունիսի 11-ին՝ ժամը 11:00-ին, «Երևանի հ.71 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան, Նոր-Արեշ 2փ.45ա շենք: Տեղեկությունների համար զանգահարել 010-45-06-02 հեռախոսահամարով: